

632.5
Q - 44

Գ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՂԱՆԴՈՒՐԴԱՆԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ
ՅԵՎ. ՆՐԱ. ԴԵՄ ԿՈՎԵԼՈՒ
ՄԻԶՈՑՆԵՐԸ

5 FEB 2013

17878

632.5
Q - 44

04 AUG 2010

ՂԱՆՂՈՒՐԴԱՆԻ ԱԲԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ
ՆՐԱ ԴԵՄ ԿՌՎԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ղանղուրդանը պատկանում է հացաբույսերի ըն-
տանիքին և գյուղատնտեսության մեջ ամենալավանդա-
վոր մոլախոտերից մեկն է : Անդրկովկասի, ինչպես նաև
Հայաստանի վորոշ շրջաններում այդ մոլախոտն այն-
քան և տարածված, վոր զբանից բամբակի բերքն ընկ-
նում է 25-ից մինչև 75 տոկոսով : Լինում են դեպքեր,
յերբ հողերի զանղուրդանով վարակվածության աստի-
ճանն այնքան և մեծանում, վոր ժամանակավորապես
նման հողամասերում կուլտուրական բույսեր մշակելը
գառնում և անհնարին : Ղանղուրդանի զարդացումն ա-
ռանձնապես մեծ և լինում գարնանացան բույսերի և
համեմատաբար թույլ և լինում աշնանացան բույսերի
մեջ :

10093
35683

ՂԱՆՂՈՒՐԴԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ԱԲԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ղանղուրդանը տարածված է Հայաստանի միայն
գաշտավարական շրջաններում : Ղանղուրդանի բազ-
մացումը կատարվում է սերմերով և վեղերատիվ ճա-
նապարհով — այն և ստորյերկրյա ցողուններով ; Նա
ունի ուղղահայց գնացող արմատներ և հորիզոնական
ռազմությամբ զարգացող ստորյերկրյա ցողուններ : Ցո-
ղունների միջոցով և, վոր նա զարգանում և տարած-
վում և հողում :

Գետնատի ապարան, Յերևան

Դաշտի 7131 (բ). Հըտա. 2091. Պատվեր 556. Տիրաժ 4000

Հանձնված և արտադրության 16 փետրվարի 1932 թ.

Տպագրված և 1932 թ.

Հնդկանրապես՝ զանդուրդանի տարածման գործում սերմերը մեծ դեր չեն խաղում, բայց մեր պայմաններում զանդուրդանը տարածվում է թե ստորյերկրյա ցողուններով և թե սերմերի միջոցով, վորովհետեւ մեղ մոտ ընդհանրապես պայքարը մոլախտերի դեմ կազմակերպված և շատ թույլ: Զանդուրդանի սերմերից առաջացած թփերը զարգացման սկզբնական շրջանում լինում են շատ թույլ և հեշտ են նրանց վոչչացնել: Թե ուղղահայաց արմատները և թե հորիզոնական ստորյերկրյա ցողունները լինում են շատ յերկար, հաճախ մետրից ել անցնում են: Ուղղահայաց գնացող արմատներից, սկսած 4—6 սմ. խորությունից զուրուն դալիս հորիզոնական ստորյերկրյա ցողուններ:

Դրանից ավելի խոր ուղղահայաց արմատները սովորաբ ճյուղավորություններ չեն տալիս, թեև նըման դեպքեր կարող են տեղի ունենալ (շատ քիչ): Այս հանդամանքը շատ կարեոր են նրա դեմ պայքար կազմակերպելու խնդրում, վորովհետեւ դա մեծապես աղդելու յե վարի խորության և նրա ձևերի վրա:

Կարեոր ե հիշել նաև այն, վոր վորքան հողվագութիւնը և լավ մշակված և ընդհանրապես կուտուրական վիճակի մեջ լինի, այնքան ել հորիզոնական ստորյերկրյա ցողուններն ավելի խորից դուրս կդան, և նրանց զարգացումն ավելի փարթամ կլինի, վորովհետեւ դրահամար հողում ստեղծված են նպաստավոր պայմաններ աերացիայի և ջրի տեսակետից: Խոկ պինդ, անկուլտուրական և խոպան հողերում զանդուրդանն իրեն շատ վատ և զգում: Սակայն սրանից չպիտի յեղբակացներ, վոր նրա դեմ հաջող պայքարելու համար հողերը պիտի պահել անկուլտուրական վիճակում:

Զանդուրդանի ստորյերկրյա ցողունների ամենա-

փոքր կտորներն անդամ, վորոնք ունեն իրենց վրա աչքեր, կարող են աճել, զարգանալ և տարածվել: Սակայն կարեոր ե այստեղի ի նկատի ունենալ այն, վոր նման կտորներից առաջ յեկած բույսերը նույնակես իրենց զարգացման նախնական շրջանում լինում են թույլ, վորպիսի հանդամանքը նույնակես մեծ նշանակություն ունի նրանց դեմ պայքարելու տեսակետից (ամենից ավելի վտանգավոր են ուղղահայաց արմատները, սակայն պակաս վտանգավոր չեն ստորյերկրյա ցողունները և վարի ժամանակ դրանցից ստացվող կտորները, թեպետ վերջինների դեմ կովելն ավելի հեշտ ե):

Ստորյերկրյա ցողունը վորոշ տարածություն անցնելուց հետո կանդ և առնում, նրա ծայրը ծովում ե դեպի ցած և ուղղահայաց դիրք ե ընդունում, այսպիսով առաջ են գալիս ուղղահայաց արմատներ, զանդուրդանի տարածման նոր օջախներ: Այս արմատներից, վորոշ ժամանակ անցնելուց հետո, դուրս են գալիս ստորյերկրյա նոր ցողուններ և այդ ընթացքը շարունակվում է անդադար:

Ստորյերկրյա ցողունների վրա տարբեր տեղերից դուրս են գալիս վերյերկրյա ժամաներ, վորոնց զարգացումն սկզբում թույլ և լինում, բայց հետագայում այդ զարգացումն ուժեղանում է:

Հանդուրդանի առանձնահատկություններից մեկն ել այն ե, վոր, յերբ նրա ցողունները կտրվում, քաղամնվում կամ մի վորեւ պատճառից վնասվում են և աերմ չեն տալիս, ապա նրանց արմատները լինում են ավելի ուժեղ, ձմռան ցրակից քիչ են վնասվում և հաջորդ տարին ավելի ուժեղ են զարգանում, այն ինչ աերմ տված զանդուրդանի արմատները լինում են թույլ, մեծ չափով տուժում են ցրահարությունից և

հաջորդ տարբեն տալիս են ավելի թույլ բույսեր։ Այս
հանգամանքը նույնպես շատ կարևոր է նրա դեմ ոլոր-
քար կազմակերպելու տեսակետից։

ԽՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ, ՂԱԽՈՒՐԴԱՆԻ ԴԵՄ

Ղանդուրդանի, ինչպես նաև ընդհանրապես բոլոր
մոլախոտերի դեմ պայքարը տարվում է յերկու ուղ-
ղությամբ՝ խեղդելու և չորացնելու միջոցով։

Արդեն ասացինք, վոր ղանդուրդանի, տարածման-
ինքում մեծ դեր են կատարում նրա արմատները և
ստորերկրյա ցողունները և վոր սերմերից ու մաճք-
կտորներից գուրս յեկած բույսերն ավելի պակաս դի-
մացկուն են և նրանց դեմ կռվելն ավելի հեշտ է, քան-
թե արմատակալած ղանդուրդանի դեմ։ Այդ պատճառ-
ով նրա դեմ տարվելիք պայքարը պիտի բաժանել յեր-
կու մասի՝ ա) պայքար հին, արմատակալած ղանդուր-
դանի դեմ, վորովհետեւ արմատակալած ղանդուրդանի
արմատները և ստորերկրյա ցողունները լինում են մաս-
իկ, չորության և ցրտին դիմացկուն, ապա նրանց դեմ
պայքարը հաջող կարող է տարվել միմիայն խեղդելու
միջոցով։

բ) Պայքար նոր, յերիտասարդ, սերմերից և ստո-
րերկրյա ցողունների կտորներից առաջացած բույսերի
դեմ։ Սրանք ընդհանրապես նախքան արմատակալելը
լինում են թույլ և հեշտ յենթակա վոչնչացման, ուստի
նրանց դեմ հաջող կարելի յե պայքարել յերկրորդ ձե-
վով, այսինքն՝ նրանց չորացնելով խոր վարի, ցանքերի
հետագա խնամքի, ձմռան ցրտի միջոցով։ Այս ձեւ մեծ
հաջողություններ չի ունենում միայն հին արմատների
նկատմամբ, վորոնք վոչ թե վոչնչանում, այլ ժամա-
նակալորապես թուլանում են։

6

ԽՆՉՊԵՍ ԽԵՂԴԵԼ, ՂԱԽՈՒՐԴԱՆԻ ՀԻՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ղանդուրդանի արմատները և ստորերկրյա ցողունն-
երն իրենց չնշառության համար պահանջում են ոչ և
թթվածին։ Երանց այդ պահանջն ավելի մեծ է, քան թե
սերմերով զարդացող և բազմացող բույսերի արմատ-
ների պահանջը։ Այս տեսակետից շատ պահանջուու
են ստորյերկրյա ցողունները և ահա, յեթե մենք զրկենք
նրանց ողիք և թթվածնից, ապա նրանք յերկար գիմա-
նալ չեն կարող և կմեռնեն անպայմանորեն։

Արմատներն ողիք զրկել կարելի յե միայն այն դեպ-
քում, յերբ հողի բոլոր անցքերը, այն և մաղական և
վոչ մաղական անոթները բռնված են ջրով և հողից այդ
միջոցով գուրս և ջաված ամբողջ ողը։ Իսկ հողի մեջ
բոլոր անոթները բռնել ջրով. հարավոր ե միայն ար-
մատի վրա ջուր դնելով, կամ ինչպես ընդունված է ա-
սել «գյուլ» անելով։

Փորձերը ցույց են տվել, վոր 7-ից մինչև 10-12
որ տեղող «գյուլ» բավական և սպանելու և հոտեցնելու
դանդուրդանի արմատները։ Անհրաժեշտ է միայն, վոր-
պեսզի այդ աշխատանքը տարվի այն ժամանակ, յերբ
ջուրը և հողը գեռ տաք են, սատած չեն։ Վորքան ուշ
կատարվի «գյուլ», այնքան սառը կլինի հողը և ջուրը,
այնքան թույլ կկատարվեն զանդուրդանի մեջ բնախո-
սական պրոցեսները և այնքան ել նա ավելի ուշ կմեռնի
ողիք բացակայությունից։

Հայտնի յե, վոր խաղողի վազը կամ ուրիշ բույ-
սերն ամենից ավելի քիչ են դիմանում ցրտին և ուրիշ
պատահարներին այն ժամանակ, յերբ նրանց մեջ դեռ
շարունակվում են կենսական պրոցեսները (որինակ՝ աշ-
խանը կամ դարձնանը)։ Ղանդուրդանի արմատներն այդ

7

տեսակետից բացառություն չեն կազմում և յերբ նըանց դեմ պայքարը տարվում է այն ժամանակ, յերբ դեռ կանգ չեն առել վեգետացիոն պրոցեսները, ապա դա տալիս ե ավելի մեծ եֆեկտ:

«Գյոլ» անելը և ղանղուրդանին խեղդելն առանձին ճեղք և վարպետություն չի պահանջում: Անհրաժեշտ և միայն, փորպեսզի արտի վրա ջուրը դրվի ամմիշապես՝ բամբակի վերջին բերքը հալավելուց հետո:

Նախ քան այդ, պիտի կատարված և վերջացրած լինեն բոլոր նախաղատրաստական աշխատանքները, այն եւ արտերի շուրջը յեղած թմբերի ուժունությարձրացնելը, առուների մաքրելը և այլն:

Ցանկալի յե «գյոլի» համար պահանջվող ջրի ամբողջ պաշարը տալ 2-3 որլա ընթացքում, վորսկեսվի հողի վրա «գյոլի» հետագա ըրջանում նոր թարմ ջուր բաց չթողնվի: Զե վոր թարմ ջրի մեջ, կա լուծված պդալի քանակությամբ թթվածին, իսկ մեզ հարկավոր է, վորսկեսվի դանղուրդանի արմատները դրկված լինեն թարմ և թթվածնով հարուստ ողից: Վորքան ավելի կատարյալ կերպով մենք դրկենք նրանց ողից, այն քան ել նրանք ավելի շուրջ կմեռնեն:

Եերբ մի վորեւե պատճառով բամբակի վերջին բերքահավաքն ուշանում է, պիտի դարձյալ չխուսափել «գյոլից» և ղանղուրդանով վարակված արտերում կիրառել այդ ոպերացիան անպայմանորեն: Այդ զեպքում միայն պիտի աշխատել «գյոլի» շրջանը յերկարացնել: Թեև ուշ աշնանը կամ ձմռանը զանդաղում է զանդուրդանի չնչառությունը, բայց և այնպես նա իրեւ կենդանի որդանիզմ, շարումակում է չնչել և յերկարատե «գյոլը» և ողի բացակայությունը կունենա նույն-

պիտի եֆեկտ, ինչպիսի եֆեկտ տալիս և կարճատե չլցութը ավելի տաք յեղանակներին:

Ուշ աշնան և ձմռան ջուր գնելը, բացի մոլախտակրի և հատկապես ղանղուրդանի գեմ պայքարելուց, ունի նաև ուրիշ շատ կարևոր նշանակություն: Ինչեւ ներ Մ. Կրելովը գտնում է, վոր ձմռան վոռուկումը, ավելացնելով հողում յեղած ջրի քանակը, պակասեցնում է նրա գոլորշիացումը գարնան և ամռան ընթացքում այն պատճառով, վոր ջուրը, սառչելով հողի խոր չերտերում, առաջ երերում ողի և հողի ջերմաստիճանների ուժեղ գրագելենաներ (տարբերություններ): Նրա փորձերից պարզվել է, վոր վորքան հողում շատ ջաւր լինի ձմռան ընթացքում և վորքան խոր թափանցած և սառած լինի այդ ջուրը, այնքան ել զարնանը մշակվող բույսերն իրենց ավելի լավ են զգում, վորովհետեւ ավելի ապահովված են լինում ջրով: Զնայած ողի ուժեղ ջերմության, նման դեպքերում հողից շատ քիչ ջուր ե գոլորշիանում, վորովհետեւ ջերմության զդալի մասը ծախսվում է սառած ջուրը հեղուկ ջուր դարձնելու համար: Նա գտնում է, վոր դեկտեմբերի ջուրն ավելի ցանկալի յե, քան թե հոկտեմբերինը և վաղ գտրնանը, վորովհետեւ վերջին դեպքում ջուրը հողում չի սառչաւմ և համեմատաբար արագ և գոլորշիանում հողի մակերեսից: Այս բացարությունը շատ հետաքրքիր և այն ահեսակետից, վոր հնարավորություն և տալիս մեզ գիտականորեն հիմնավորելու ձմռան արաթի գրական կողմերը: Պարզվում է, վոր ձմռան արաթի զեպքում ամառը բամբակին մեկ ջուր պակաս և տրվում այն պատճառով, վոր ջուրը, սառչելով հողի խոր չերտերում, կլանում և գտրնանը հողի մակերեսի վրա ընկ-

նող ջերմության մի ժամը և այդպիսով զգալի չափով
պակասեցնում ե գոլորշիացումը : Բացի մոլախոտերի
դեմ կովելուց, հողում ջուր կուտակելուց և գոլորշիա-
ցումը պակսեցնելուց (յեթե միայն արաթը կատարված
է ճիշտ), ճմռան ջուրն ունի նաև այն նշանակությունը,
վոր նա սառչելով և հալչելով, ինչպես նաև խոնավ և
սառած հօղի զգալի ջերմային դեֆորմացիաներ առաջ
բերելով, նպաստում է հողի փիսրեցման կամ «սրսու-
ռության» : Պարզ ե, վոր «սրսուած» և փուխր հողում
բույսերն իրենց ավելի լավ պիտի զգան և բերքն ավելի
շատ պիտի տան, քան թե ստրուկտուրան կորցրած հո-
ղերում : Այս բույրից դժվար չի յեղրակացնել, վոր աշ-
նան ջուր դնելը (նաև ճմռան) ունի խոչոր նշանակու-
թյուն զանդուրդանի դեմ կովելու, ջրային ուսուրա-
նելը տնտեսելու և հողի ստրուկտուրան վերականգ-
նելու խնդրում և վոր այդ ոպերացիայի վրա բամբա-
կացան շրջաններում պիտի դարձնել հատուկ ուշադրու-
թյուն : Ղանդուրդանը, բացի «դյոյլ» անելուց, կարելի
յե խեղդել նաև չալթուկի միջոցով : Այն վայրերում,
ուր թույլ ե տրված չալթուկ մշակել, պետք ե այդ
կուլտուրային հատկացնել նախ և առաջ այն դաշտերը,
վորոնց վրա զանդուրդանի չափազանց զարդացման և
տարածման հետևանքով բամբակ 32 թվին մշակել չէ
կարելի : Բացի դա, այդ հողերը պիտի գտնվեն դյու-
րից վորոշ հեռավորության վրա և ցանվեն համաձայն
Առժողկոմատի ցուցմունքների : Պարզ ե, վոր նման հո-
ղերը բացառիկ են և կաղմում են աննշան տոկոս :

ՊԱՅԻՔԱՐ ՍԵՐՄԵՐԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ
ՂԱՆՂՈՒՐԴԱՆԻ ԴԵՄ

Աշնանը ծլած սերմերից ստացված թփերը լինում
են թույլ, նրանց արմատներն աննշան յերկարություն
են ունենում : Զմռան ցրաերից նման թփերի մեծագույն
մասը մեռնում է և այս ձեկի տարածման վտանգն ընդ-
հանրապես մեծ չէ :

Ինչ վերաբերում ե գարմանը ծլած սերմերից ա-
ռաջացած ղանդուրդանին, ապա նրանք գարնանացան
շարքահերկ բույսերի մեջ զարդանում են անարգել,
արագ և արտերի անհնամության դեպքում՝ տարած-
վում են չատ մեծ չափով : Նման ղանդուրդանների դեմ
հաջողությամբ կարելի յե կովել նրանց չորացնելով,
կատարելով աշնան և գարնան խոր վար : Այս ձեկի
տարաջացած բույսերի վոչնչացնելը դժվար չի, անհրա-
ծես և միայն, վորպեսզի պայքարը նրանց դեմ տար-
վի նախ քան նրանց ամրանալը, ուժեղանալը, վեգե-
տացիան սկսելը և, վոր գլխավորն ե, նախ քան ստոր-
յերկրյա ցողուններ տալը : Գարնան և աշնան վարի խո-
րությունը և ծամանակը մեծ նշանակություն ունեն
դանդուրդանի դեմ պայքարելու տեսակետից նաև ինն
արմատների նկատմամբ :

Աշնանը և թե գարնանն արտը վորքան ուշ վարվի,
այնքան խոր արմատներ կտա զանդուրդանը և այնքան
ել դժվար կիխնի նրան վոչնչացնել : Սաղը վարի զեպ-
քում գութանը կտրում և հողի յերես և հանում զան-
դուրդանի արմատների աննշան մասը, իսկ խոր վարի
ժամանակ արմատների և ստորերկրյա ցողունների
զգալի մասն և գուրս գալիս հողի յերեսը, վորոնք և
ցրտահարվում են ճմռան ընթացքում :

Գալրնան վարը պիտի կատարել այն հաշվով, վոր զանդուրդանի արմատներին հնարավորություն չորմի ուժեղանալու և վեգետացիա կատարելու:

Ստորերկրյա ցողունների վրա յեղած թփերի, ինչպես նաև սերմերից և արմատի կտորներից առաջացած թփերի դեմ կովելու գործում դգալի եփեկտ տալիս են նախ քան ցանքը կատարվող փոցիւը և փիսրեցումները: Այս ձեռ վորքան անզոր և հին արմատների դեմ պայքարելու խնդրում, այնքան եփեկտավոր և թույլ զարդացում ունեցող թփերի նկատմամբ:

Կանդուրդամի դեմ պայքարելու տեսակետից վընդական նշանակություն ունի վաղ կատարած ժաղիանը և կուլտիվացիան: Վորքան ուշ են կատարվում այդ պրոցեսները, այնքան շատ են ուժեղանում զանդուրդանի արմատները և այնքան ել դժվարանում են ըրա դեպ պայքարը: Մեզ մոտ սովորաբար զանդուրդանը վերջին քաղհանից հետո ոգոստոս ամսից սկսում են որից բարձրանալ և ծաղկել ու սերմ տալ, սակայն այդ հանդամանքի վրա հարկ յեղած ուշադրություն չի դարձվում: Յեթե լրիվ քաղհանի կարիք չկա, ապա նկատված զանդուրդաններն անսպայմանորեն պիտի հանել ձեռքերով և վոչ մի դեպքում թույլ չտալ, վորպեսդի նրանք տան ուժեղ արմատներ և սերմեր:

Թե աշնան և թե զարնան վարի և փոցիւի ժամանակ մեծ քանակությամբ արմատներ են դուրս դալիս հողի յերես, վորոնք հետագայում մասամբ կամ ցրտահարվում են կամ չորանում, բայց արմատների մի մասը մնում է կենդանի և հետագայում շարունակում է յուր զարդացումը: Ահա նման արմատների հավաքելը և այրելն առանձնապես ուժեղ վարակված արաերում

կարող է տալ զգալի արդյունք, և անհրաժեշտ է, վորպեսզի այդ աշխատանիքը կատարվի հենց առաջիկա գրանանից:

Այսպիսով—«գյուլը» ինն արմատների և ստորերկրյա ցողունների նկատմամբ և աշնան ու գարնան խոր վարը, փոցլոր, կուլտիվացիան և բաղիանը նոր դանդուրդանիների նկատմամբ—պայքարի այն հիմնական մերոդներն են, վորոնք պետք է կիրառվեն անմիջապես և վարոնք մեծապես նպաստելու յեն 1932 թ. բամբակի բերքատվության բարձրացման գործին:

ՀՀ Ազգային գրադարան



NL0287396

17878